



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականների իմացական
կարողությունների զարգացման առանձնահատկությունները

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Զվարդ Սուդյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Նիգամու
միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
1.1 Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական բնութագիրը և առաջատար գործունեությունը	4
1.2 Կրտսեր դպրոցականի անձնավորության զարգացումը	5
1.3 Կրտսեր դպրոցականի հաղորդակցման առանձնահատկությունները	8
1.4 Կրտսեր դպրոցականի հարաբերությունների առանձնագատկությունները	10
Գլուխ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
2.1. Իմացական գործընթացների ընդհանուր բնութագիրը	12
2.2 Իմացական գործընթացների առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում	14
Եզրակացություններ	19
Օգտագործված գրականության ցանկ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ դեռևս պահպանվում է խաղալու պահանջումը: Կրտսեր դպրոցականի համար չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրոշմատաճանճանների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2–3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրուն հեղինակությունն է, ինչն էլ ուղղորդում է սոցիալական զարգացումը: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով:

Աշխատանքի հիմնական նպատակն է կրտսեր դպրոցականների իմացական կրողությունների զարգացման առանձնահատկությունները:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ **խնդիրներներն**՝

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունները, դրանց զարգացման առանձնահատկությունները:
- Ներկայացնել իմացական կարողությունների դերն ու կարևորությունը կրտսեր դպրոցականի կյանքում:
- Ներկայացնել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները:

Հետազոտության կազմակերպմանը նպաստել է թեմայի շուրջ եղած մասնագիտական գրականության ուսումնասիրումը, հետազոտության համար անհրաժեշտ մեթոդների սահմանումը, ինչպես նաև արդյունքների ամփոփումը:

Գլուխ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական բնութագիրը և առաջատար գործունեությունը

Կրտսեր դպրոցական տարիքն ընդգրկում է երեխայի կյանքի 6-7-10-11 տարեկանն ընկած ժամանակահատվածը: Այս տարիքում տեղի են ունենում մի շարք նշանակալի փոփոխություններ՝ ինչպես ֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական առումներով:

Հենց այս փուլում է, որ երեխայի մոտ ձևավորվում են այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը և աշխատասիրությունը, ինչն առավելապես պայմանավորված է առաջատար գործունեության փոփոխության՝ խաղից ուսուցման անցման գործոնով: Եվ հենց այստեղ է, որ մի շարք հեղինակների կողմից ընդգծվում է 7 տարեկանի բարդության և միառժամանակ ձգնաժամային լինելու խնդիրը: Դպրոցին երեխայի պատրաստ լինելու և չլինելու գործոններով էլ որոշ հեղինակներ պայմանավորում են 7 տարեկանի ձգնաժամի ընթացքը: Իսկ երեխայի դպրոցին պատրաստ լինելը դիտարկվում է մի շարք տեսանկյուններից՝

- ✓ Ինտելեկտուալ պատրաստվածություն- Երեխայի մոտ արդեն իսկ անհրաժեշտ գիտելիքների պաշարի առկայության մասին է խոսքը:
- ✓ Կամային պատրաստվածություն- Այստեղ դիտարկվում է այն հանգամանքը, թե արդյոք երեխան կարող է կամք ցուցաբերել՝ ենթարկվելու խմբային կանոններին, ուսուցչի պահանջներին:
- ✓ Մոտիվացիոն պատրաստվածություն- Դպրոցի հանդեպ դրական վերաբերմունք, սովորելու ձգտում:
- ✓ Սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն- Այնպիսի որակներ, որոնք հնարավորություն կտան երեխային շփվել իր հասակակիցների հետ, համագործակցել և այլն:

Ինչպես նշում է Օ. Մոլչանովան «... կրտսեր դպրոցական տարիքը զգայուն շրջան է բարոյական նորմերի յուրացման տեսանկյունից»: Երեխան որոշակի պատկերացումներ է ձևավորում ստի՝ դրա բացասական կողմերի վերաբերյալ՝

- ✓ Սուտը վատ է, քանի որ դրա համար կարող են պատժել: Մինչդեռ այս տարիքի երեխան ամեն բան անում է պատժից խուսափելու և խրախուսանքի արժանանալու համար:
- ✓ Մեծերին ստելը ավելի վատ է, քան հասակակիցներին:

Այս փուլում նաև հուզական ինքնակարգավորման կարողության մակարդակն է բարձրանում. Երեխան փորձում է հնարավորինս զսպել արցունքները, թաքցնել վախերը, ցույց չտալ, որ ինչ-որ մեկից, օրինակ՝ ուսուցչից նեղացել է և այլն: Կամային հատկությունների զարգացման արդյունքում երեխան կարողանում է կառավարել սեփական վարքը, նպատակներ դնել իր առջև և հասնել դրանց: Երեխայի ինքնագնահատականի մակարդակն առավելապես պայմանավորված է ուսումնական գործունեության ընթացքում ունեցած հաջողություններով և անհաջողություններով, ուսուցչի և ծնողների կողմից հնչեցված գնահատականներով [3, էջ 239]:

1.2 Կրտսեր դպրոցականի անձնավորության զարգացումը:

Անձնավորության ձևավորումը, որը սկսվել էր նախադպրոցական տարիքում, շարունակում է զարգանալ կրտսեր դպրոցական տարիքում՝ կապված դրդապատճառների ստորադասման և ինքնագիտակցության զարգացման հետ: Բայց կրտսեր դպրոցականն այլ պայմաններում է ապրում: Նա ընդգրկվում է հասարակական նշանակություն ունեցող ուսումնական գործունեության մեջ, որի արդյունքները բարձր կամ ցածր գնահատականի են արժանանում մեծահասակների կողմից: Եվ ահա դպրոցական ուսուցման հաջողությունից, լավ կամ վատ սովորելուց և դրա հետ կապված մեծահասակների խրախուսանքից է կախված երեխայի անձնավորության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում: Եվ ընդհանրապես, ուսումնական գործունեությունն է ապահովում երեխայի զարգացումն ու հուզական բարեհարմարությունը տարիքային այս փուլում:

Դրդապատճառների ոլորտը: Դրդապատճառները, ինչպես նշում է Ա.Լեոնտևը, անձի ձևավորման միջուկն են կազմում: Ի՞նչն է առաջ մղում երեխային: Ի՞նչ հետաքրքրություններ ու ցանկություններ են նրանում առաջանում: Ինչպես արդեն գիտենք, դպրոցական ուսուցման սկզբնական շրջանում երեխայի մեջ աստիճանաբար ձևավորվում է դպրոցականի ներքին դիրքորոշում, որի արդյունքում երեխան ուզում է սովորել: Փորձենք պարզել, թե որն է կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության հիմնական և առաջնային շարժառիթը:

Ամենաառաջնային և կարևոր դրդապատճառը երեխայի համար բարձր գնահատականն է, որը տրվում կամ նշանակվում է ուսուցչի կողմից, և խրախուսվում ու գովերգվում է մյուս մեծահասակների կողմից: Բարձր գնահատականը երեխայի համար խրախուսանքի աղբյուր է, էմոցիոնալ բարեկեցության գրավական, հպարտության

առարկա: Երբ երեխան լավ է սովորում, նրան գովում են, խրախուսում թե՛ ծնողները, թե՛ ուսուցիչները, ուսուցիչ, որը դասարանում երեխաների համար միակ հեղինակությունն է, և որի կարծիքը երեխաներից յուրաքանչյուրի մասին լավ կամ վատ կերպով ապահովում է յուրաքանչյուր երեխայի կարգավիճակը դասարանում: Ընտանիքում բարձր գնահատական ստացած երեխաներին միշտ ուշադրության կենտրոնում են պահում, որպես օրինակ են բերում մյուս երեխաների մոտ: Բարձր գնահատականն այն մոտիվն է, որը երեխային ստիպում է թողնել ամեն ինչ և նստել սովորելու: Ըստ Լեոնտևի, բարձր գնահատականը ռեալ գործող դրդապատճառ է և, որպեսզի երեխան արժանանա այդ բարձր գնահատականին, նա պատրաստ է սովորել: Մյուս սոցիալական դրդապատճառները՝ պարտքի, պատասխանատվության զգացումը, կրթություն ստանալու անխուսափելիությունը նույնպես հանդես են գալիս, որպես լավ սովորելու շարժառիթներ: Սակայն գնահատականն ավելի շոշափելի է, ավելի մոտ է երեխային: Նա անմիջապես զգում է դրա արդյունքն ու հետևանքը: Մինչդեռ վերացական հասկացությունները պարտքի ու պատասխանատվության կամ ուսումը հետագայում շարունակելու վերաբերյալ երեխաների համար այնքան էլ շոշափելի չեն: Սակայն հարկ է նշել, որ թվարկված սոցիալական դրդապատճառները, որոնք երեխաները հիմնականում վերցնում են մեծահասակներից, նրանք յուրացնում են իրենց ընտանիքում: Ուսումնական գործունեության հաջորդ կարևոր դրդապատճառը իմացական հետաքրքրություններն են: Սակայն պետք է նշել, որ առաջին դասարան հաճախող երեխան խոր իմացական հետաքրքրություններ չունի առարկաների նկատմամբ: Դրանք հիմնականում հատուկենտ երեխաներ են, որոնք ունեն որոշակի ընդունակություններ այս կամ այն բնագավառում և բնականաբար իմացական հետաքրքրություններ են դրսևորում համապատասխան ուսումնական առարկաների նկատմամբ: Նման երեխաներին անվանում են շնորհալի կամ օժտված, որոնք դասերի ժամանակ դրսևորում են իմացական ակտիվություն, հետաքրքրություն: Նրանցում նկատվում են ինտելեկտուալ բռնկումներ, մտածողության վերելքներ: Իմացական հետաքրքրությունները ինքնակատարելագործման և ինքնազարգացման կարևոր գործոններ են: Երբ երեխան ուսուցման ժամանակ ուրախանում է, որ ինչ-որ նոր բան է սովորում, ինչ-որ նոր բան է հասկանում, նշանակում է, որ նրանում զարգանում են ուսումնական գործունեության կառուցվածքին համապատասխան մոտիվներ: Ցավոք, նույնիսկ լավ սովորող աշակերտների շրջանում քիչ են այն աշակերտները, որոնք առաջնորդվում են ուսումնաիմացական մոտիվներով: Ուսման մեջ ետ մնացող շատ աշակերտներ հետաքրքրություն են դրսևորում այսպես կոչված երկրորդական առարկաների նկատմամբ՝ երաժշտություն, աշխատանքի ուսուցում, ֆիզկուլտուրա և այլն:

Մյուս դրդապատճառը հաջողության հասնելու մոտիվն է: Սա ոչ հազվադեպ է դառնում դոմինանտ: Բարձր առաջադիմությամբ երեխաների մոտ բավականին վառ է դրսևորվում հաջողության հասնելու դրդապատճառը՝ առաջադրանքները ճիշտ, լավ, արագ, գեղեցիկ կատարելու ցանկությունը, անհրաժեշտ արդյունք ստանալու ցանկությունը: Եվ, չնայած, որ այն մեծ մասամբ համընկնում է բարձր գնահատական ստանալու մոտիվի հետ, այնուհանդերձ դպրոցական գնահատականից անկախ կողմնորոշում է երեխայի ուսումնական գործունեությունը՝ դրանով իսկ նպաստելով ինքնակարգավորման զարգացմանը: Հաջողության հասնելու մոտիվը իմացական հետաքրքրությունների հետ առավել արժեքավոր դրդապատճառ է, և այն հարկավոր է տարբերել հեղինակության, ազդեցիկության դրդապատճառներից: Այն պակաս հանդիպող դրդապատճառ է և բնորոշ է բարձրացված ինքնագնահատական ունեցող երեխաներին: Այն երեխային մղում է սովորելու իր համադասարանցիներից լավ, նրանցից առանձնանալու, առաջինը լինելու համար: Եթե նման աշակերտներն ունենում են նաև զարգացած ընդունակություններ, ապա այն դառնում է գերազանցիկ երեխայի զարգացման հզոր խթան: Ինդիվիդուալիզմը, ընդունակ աշակերտների հետ մշտական մրցակցությունը, մյուսների նկատմամբ հավակնոտ վերաբերմունքը ինչ-որ տեղ աղավաղում է երեխայի անձնավորության ձևավորման ուղղվածությունը: Բացի այդ, նման տիպի երեխաները մեծանալով գործունեության ոլորտում հաջողությունների են հասնում, բայց զուրկ են լինում ստեղծագործականությունից, որովհետև ամեն ինչում առաջինը լինելու ձգտումը, առանձնանալու, բացառիկ լինելու միտքը խանգարում, զրկում են նրանց ստեղծագործական որոնումների հնարավորությունից: Եվ ընդհանրապես, ապացուցված է, որ մրցակցությունն ու ստեղծագործականությունն անհամատեղելի են:

1. Անհաջողությունից խուսափելու դրդապատճառ : Սա հիմնականում բնորոշ է միջակ առաջադիմությամբ աշակերտներին, որոնք սովորում են, դասերին պատրաստ են ներկայանում, որ խուսափեն մեծահասակների կշտամբանքից, դժգոհությունից, արգելքներից: Հարկ է նշել, որ այս դրդապատճառը բավականի ինտենսիվորեն զարգանում է դպրոցական ուսուցման սկզբնական շրջանում և, որպեսզի երեխան տիաճություններից խուսափի, ավելորդ խոսակցությունների առիթ չտա, սովորում է և կատարում իր պարտականությունները: Անհաջողությունից խուսափելու մոտիվն ուղեկցում է երեխային ողջ ուսուցման ընթացքում, և սկզբնական ուսուցման վերջում ետ մնացող դպրոցականները մեծ մասամբ զրկվում են հաջողության հասնելու և բարձր գնահատական ստանալու մոտիվացիայից: Իսկ անհաջողությունից խուսափելու մոտիվը մեծ ուժ և

նշանակություն է ձեռք բերում և ուսումնական գործունեությանը տալիս է բացասական հուզական երանգավորում[4]:

:

1.3 Կրտսեր դպրոցականի հաղորդակցման առանձնահատկությունները.

Հասակակիցների հետ հաղորդակցումը, ինչպես և համատեղ գործունեությունը, երեխայի անձի ձևավորման պարտադիր պայման է: Հաղորդակցման պրոցեսում նա մշակում է կոմունիկատիվ հմտություններն ու կարողությունները, ձևավորում է գիտելիքներ շրջապատողների և սեփական «Ես»-ի վերաբերյալ՝ համեմատելով իրեն հասակակիցների, իսկ հետո նաև մեծահասակների հետ: Համատեղ գործունեությունը և հաղորդակցումը կազմում են միասնություն: Միջանձնային հաղորդակցման մեջ կարող են առանձնացվել երեք կողմեր.

1. Հաղորդակցման կոմունիկատիվ կողմը կապված է ինֆորմացիայի փոխանակման հետ, սա միմյանց գիտելիքների հարստացման գործընթացն է՝ հասակակիցներից յուրաքանչյուրի կողմից կուտակված գիտելիքների հաշվին:
2. Հաղորդակցման ինտերակտիվ կողմը համատեղ գործունեության ընթացքում ծառայում է հասակակիցների պրակտիկ փոխգործունեությանը: Այստեղ դրսևորվում է նրանց համագործակցելու, միմյանց օգնելու, իրենց գործողությունները կորդինացնելու և փոխհամաձայնեցնելու ընդունակությունը: Հաղորդակցման հմտությունների և կարողությունների բացակայությունը կամ նրանց ոչ բավարար ձևավորվածությունը երեխայի մոտ բացասականորեն են ազդում նրա անձի զարգացման վրա, առաջացնում են դժվարություններ նրա դաստիարակության մեջ:
3. Հաղորդակցման պերցեպտիվ կողմը բնութագրում է երեխաների կողմից իրենց ընկերների փոխըմբռնման գործընթացը, նրանց անհատական գծերի և հատկանիշների ճանաչման գործընթացը: Նրա հիմնական մեխանիզմներն են իդենտիֆիկացիան, ռեֆլեքսիան և ստերեոտիպիզացիան:

Հաղորդակցման կոմունիկատիվ, ինտերակտիվ և պերցեպտիվ կողմերն իրենց միասնության մեջ կանխորոշում են նրա բովանդակությունը, ձևը և դերը երեխաների կենսագործունեության մեջ: Երեխաների և դեռահասների հաղորդակցումը հասակակիցների հետ, ինչպես նաև նրանց հաղորդակցումը մեծահասակների հետ, կենսականորեն անհրաժեշտ է, այն հանդիսանում է մարդու նորմալ զարգացման պայման: Երեխաների հաղորդակցումը հասակակիցների հետ կատարվում է

մանկապարտեզի խմբերում, դասարանում, տարբեր տեսակի ֆորմալ և ոչ ֆորմալ մանկական և դեռահասների խմբերում: Սոցիալ- հոգեբանական փորձի ձեռքբերման համար երեխան կարիք ունի հաղորդակցման շրջանակի մշտական ընդլայնման: Այսպես, 7 տարեկան երեխաները հասակակիցների հետ հաղորդակցման մեջ անց են կացնում ժամանակի 50-70 տոկոսը: Հասակակիցների հետ հաղորդակցման կարևորությունը մեծանում է կրտսեր տարիքից ավագը, նրա քանակական բնութագրումները կարող են և չփոխվել ուսումնական և հասարակական ծանրաբեռնվածության հետ կապված Հաղորդակցման բովանդակությունը, հաճախականությունը, ձևերը էականորեն փոփոխվում են տարիքի հետ միասին:

Կրտսեր դպրոցականների համար, ինչպես և նախադպրոցականների համար մեծահասակը շարունակում է մնալ ամենահեղինակավոր անձնավորությունը: Բնութագրական է, որ գնահատականներում, որոնք նրանք տալիս են հասակակիցներին, երեխաները առաջնորդվում են գլխավորապես ուսուցչի կարծիքով: Այդ կապակցությամբ երեխաների հարաբերությունները կրտսեր դպրոցական տարիքում հիմնականում կառուցվում են մանկավարժի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ: Սակայն հասակակիցների միջանձնային հարաբերությունների հիմքերն այլ են, քան նախադպրոցականների խմբերում: Ընկերների ընտրության մեջ անընտրությունները որոշվում են գլխավորապես ուսման մեջ հասակակիցների հաջողությամբ կամ անհաջողությամբ: Կրտսեր դպրոցականներին բնորոշ են հասակակիցների բեռնացված գնահատականներ՝ մի մասին նախընտրում է մեծամասնությունը, մյուսներին՝ ոչ մեկը, ինչը նույնպես կապված է երեխայի սոցիալական դիրքի փոփոխության հետ, նրա համար նոր ուսումնական գործունեության մեջ ներգրավումով: Այդ տարիքում հաղորդակցման մեջ սկսում են ձևավորվել ըստ հետաքրքրությունների փոխհարաբերությունների սկզբնական դրսևորումները, որոնք ընկած են տարբեր տեսակի ոչ ֆորմալ խմբերի հիմքում: Չնայած հաղորդակցման ընկերների ընտրության մեջ որոշակի իրադրայնությանը, հասակակիցների վերաբերմունքը միմյանց նկատմամբ ձեռք է բերում կայունության հատկանիշներ, առանձնանում են ընդունված երեխաները, որոնք օժտված են հաղորդակցման հմտություններով և կարողություններով, և երեխաներ, որոնք չեն վայելում հասակակիցների սերը դասարանում: Ներդասարանային հաղորդակցման համակարգում անբարենպաստ դիրքը կարող է երեխային դարձնել կոնֆլիկտային և դժվար՝ մանկավարժի ներգործության համար[1]:

1.4 Կրտսեր դպրոցականի հարաբերությունների առանձնագատկությունները.

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները իրենց հարաբերությունները կառուցում են գտնվելով նոր դերի մեջ: Սոցիալական զարգացման նոր իրադրությունը, որը կապված է դպրոց հաճախելու հետ, ադապտացիայի անհրաժեշտություն է առաջացնում: Նոր պահանջները տարածվում են կյանքի բոլոր հարաբերությունների վրա, և առաջին հերթին ուսուցիչների, ծնողների և հասակակիցների հետ փոխհարաբերությունների վրա: Այդ պատճառով կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունները սկզբնապես զարգանում են որպես սովորողների միջև ֆունկցիոնալ-դերային հարաբերություններ: Համապատասխանաբար միմյանց գնահատականների համար հիմք են հանդիսանում դերի, և ոչ թե անձնային բնութագիրները:

Այս տարիքում սովորողների փոխհարաբերությունների զարգացումը ունի մի քանի հիմքեր:

Նախ, ձևավորվում են մարդու նկատմամբ պահանջների մասին պատկերացումները, որոնց հիման վրա կրտսեր դպրոցականները գնահատում են միմյանց: Ընդ որում գնահատելիս նրանք հիմնվում են այն հասկացման վրա, թե ինչքանով է խմբի տվյալ անդամը համապատասխանում աշակերտի դերի մասին պաշտոնական պատկերացումներին, որտեղ գլխավոր կողմնորոշիչներ են առաջադիմությունը և կարգապահությունը: Որպես կանոն, սոցիոմետրական աստղերի մեջ չկան այնպիսի երեխաներ, որոնք ունեն ցածր առաջադիմություն և վատ վարք, իսկ խմբի կողմից մերժվածները հիմնականում ունեն այս բնութագիրները: Միայն III – IV դասարաններում, անձնական փորձի կուտակման շնորհիվ փոխադարձ գնահատականներում ավելանում են հղումները ոչ դերային, այսինքն՝ անձնային հատկանիշներին: Արդեն այսպիսի բնութագիրների հիման վրա ձևավորվող միջանձնային հարաբերությունները կարող են չհամապատասխանել աշակերտի վարքի պաշտոնական ձևերին նորմերին, քանի որ ժամանակակից երեխաները իսկական ընկերության դրսևորումները տեսնում են նաև այդ նորմերին հակադրվելու մեջ:

Փոխադարձ գնահատականների ձևավորման պայման է հանդիսանում ուսումնական գործունեությունը, և նաև այն, թե ինչպես է ուսուցիչը առավել ռեֆերենտային մեծահասակը, վերաբերվում այս կամ այն աշակերտին:

Կրտսեր դպրոցականների կարգավիճակը դասարանային խմբում բավականին կայուն է: Բայց այստեղ նկատվում է սեփական կարգավիճակի գիտակցման պարադոքսը, երբ բարձր սոցիոմետրական կարգավիճակ ունեցողները թերագնահատում են իրենց դիրքը խմբում, իսկ ցածրները՝ ընդհակառակը: Վերջին

դեպքում, ըստ որոշ գիտնականների, երեխաները խուսափում են իրենց ցածր դիրքի գիտակցումից հոգեբանական պաշտպանական հնարների միջոցով: Ինչպես բարենպաստ, այնպես էլ անբարենպաստ դիրքը անձի ձևավորման կարևոր պայման են հանդիսանում:

Կրտսեր դպրոցական տարիքում դասարանային խմբի հոգեբանական մթնոլորտը սերտորեն կապված է մանկավարժական ներգործության ձևերի հետ: Մանկավարժի այսպես կոչված «աջակցող» վարքը նպաստում է երեխաների միջև ւարաբերությունների բարենպաստ ֆոնի ձևավորմանը, իսկ առավելապես բացասական սանկցիաների կիրառումը հանգեցնում է երեխաների կողմից անվտախության դեպի մեծահասակները, կոնֆլիկտների և մանկական միջավայրում անառողջ մթնոլորտի[2]:

Գլուխ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԽՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Իմացական գործընթացների ընդհանուր բնութագիր

Բազմաթիվ հետազոտությունները վկայում են կրտսեր դպրոցական տարիքում շարժողական ունակությունների զարգացման առաջընթացի, այսինքն՝ ֆիզիկական հիմնական շարժումների (քայլք, վազք, մազլցում, նետում և այլն) և ֆիզիկական որակների (ճարակություն, արագաշարժություն, արագ կողմնորոշում և այլն) բուռն զարգացման մասին:

Կրտսեր դպրոցական տարիքում դրսևորվող հակասությունն այն է, որ երեխան պետք է կարողանա յուրացնել սոցիալական բովանդակությամբ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, բայց ոչ թե որպես առարկայական գործունեություն, ինչպիսին էր այն վաղ մանկության տարիքում, այլ վերացականորեն և տեսականորեն, այդ գիտելիքների հետ նա պետք է սկսի կատարել գործողություններ, որոնք հարկավոր է սովորել:

Կրտսեր դպրոցական տարիքում առաջատարը դառնում է ուսումնական գործունեությունը և, չնայած վերջինիս զարգացումը շարունակվում է դպրոցական կյանքի ողջ ժամանակահատվածում, նրա հիմքերը դրվում են ուսուցման առաջին տարիներին: Ուսումնական գործունեությունն ունի որոշակի կառուցվածք: Փորձենք ներկայացնել այն Դ.Էլկոնինի մեկնաբանությամբ:

1. Մոտիվացիոն կամ դրդապատճառային բաղադրամաս: Կրտսեր դպրոցականի ուսուցման դրդապատճառները տարբեր են: Ուսումնական գործունեության հիմքում կարող են ընկած լինել մեծահասակների խրախուսանքին արժանանալու, բարձր գնահատական ստանալու, պարտքի և պատասխանատվության և ուրիշ շատ մոտիվներ/դրդապատճառներ/: Դրանցում մենք առանձնացնում ենք այնպիսիները, որոնք առավել համարժեք են ուսուցման խնդիրներին և որոնց շնորհիվ աշակերտի գործունեությունը դառնում է առավել բովանդակալից և արդյունավետ: Դ. Էլկոնինն այդ մոտիվն անվանում է ուսումնախմբացական : Նրանց հիմքում ընկած են ինքնագարգացման և ճանաչողության, իմացության պահանջմունքները: Դա հետաքրքրությունն է ուսումնական գործունեության բովանդակային կողմի նկատմամբ, այսինքն, թե ինչ են սովորեցնում, և ուսուցման բուն գործընթացի նկատմամբ, այսինքն, թե ինչպես և ինչ միջոցով են հասնում որոշակի

արդյունքի: Կրտսեր դպրոցականի հետաքրքրությունները կարիք ունեն որոշակի քննարկման: Ինչպես գիտենք դպրոցական ուսուցման սկզբնական շրջանում երեխայի մոտ առաջանում է հետաքրքրություն ընդհանրապես դպրոցի նկատմամբ, դպրոցական կյանքի արտաքին դրսևորումների նկատմամբ: Կրտսեր դպրոցականի հետաքրքրությունները արտաքին ոլորտից հետզհետե տեղափոխվում են ներքին ոլորտ, վերածվելով ներքին հետաքրքրությունների՝ ինչ-որ նոր բան իմանալու, նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտման: Երեխայի հետաքրքրությունների հիմքում ընկած է կողմնորոշիչ հետազոտողական ռեֆլեքսը, որը Պավլովն անվանում է «Ի՞նչ է սա»: Նշենք նաև, որ կրտսեր դպրոցականի հետաքրքրությունները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով.

ա/ ընդօրինակմամբ,

բ/ մակերեսայնությամբ,

գ/ ցրվածությամբ,

դ/ դեպի մոտակա արդյունքն ուղղվածությամբ,

ե/ սեփական կենսափորձին մոտ լինելու հանգամանքով:

2. Երկրորդ բաղադրամասն ուսումնական խնդիրն է, որն իրենից ներկայացնում է որոշակի առաջադրանքների, հանձնարարությունների ամբողջություն, որոնց կատարման արդյունքում երեխան ձեռք է բերում գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

3. Ուսումնական գործառույթներ: Վերջիններս մտնում են ուսումնական գործողությունների ձևի, կազմի մեջ: Ուսումնական խնդիրները և ուսումնական օպերացիաները ուսումնական գործունեության հիմնական օղակն են հանդիսանում:

4. Վերահսկում և ինքնավերահսկում: Կրտսեր դպրոցականի ուսումնական

գործունեությունը սկզբում վերահսկվում է ուսուցչի կողմից: Հետագայում աստիճանաբար երեխան սովորում է ինքը վերահսկել սեփական ուսումնական գործունեությունը: Ինքնավերահսկումը ձևավորվում է մի կողմից ուսուցչի հսկողությամբ, մյուս կողմից էլ տարերայնորեն: Կարևոր է, որ երեխան վերահսկի ոչ միայն իր ուսումնական գործունեության վերջնական արդյունքը, այլ ողջ գործընթացը փուլ առ փուլ, քայլ առ քայլ:

5. **Գնահատում և ինքնագնահատում:** Ուսումնական գործունեության կարևոր բաղադրամասը գնահատումն է, որի ժամանակ ուսուցիչը չի սահմանափակվում աշակերտին նիշ կամ բալ նշանակելով: Անչափ կարևոր է, որ ուսուցիչը բացատրություններ տա, մեկնաբանի, թե ինչն է երեխայի աշխատանքում լավ, որն է դրականը, որը բացասականը, որը պետք է շտկի կամ հետագայում զարգացնի: Այսինքն հարկավոր է, որ ուսուցիչը գնահատման որոշակի չափանիշներ, կողմնորոշիչներ տա երեխային, որ վերջինս ինքն էլ կարողանա գնահատել սեփական աշխատանքը: Խոսելով ինքնագնահատման մասին, , որ երեխան դպրոց է գալիս բարձրացված ինքնագնահատականով: Ընդհանրապես երեխայի կողմից բարձր է գնահատվում այն աշխատանքը, որն արագ է արվում, որի վրա շատ ջանքեր է ծախսում, հաճախ անտեսելով ստացած արդյունքը[6]:

2.2 Իմացական գործընթացների զարացումը կրտսեր դպրոցականների մոտ

Կրտսեր դպրոցականներն ունեն իրենց տարիքին հատուկ մի քանի առանձնահատկությունները, որոնք նախադպրոցական տարիքի օրգանական նշարունակությունն են: Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Նրանք գտնում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներն: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ նրանց մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմք: Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը , վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը:

Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունները ընդօրինակումն է: Նրանք շատ ենսիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը:

Նրանց ընդօրինական անաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: ցավոք, երեխաները ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափահասները պետք է խուսափեն բացասական վարքի ձևերից:

Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավվելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների և ուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում է բացասական հուզական վիճակներ, հոգեկան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, կամային վճռականությունը և պարտքի զգացումը:

Ընկալման զարգացումը

Կրտսեր դպրոցականների ընկալումը սկզբնական շրջանում կրում է ընդհանրացված, ոչ տարբերակաված բնույթ: Նրանք դժվարանում են միանգամից տարբերակել առարկաների ու պատկերների ներքին կառուցվածքային բաղադրիչները: Օրինակ է որևէ տեքստը նթերցելիս նրանք հայացքով թռչում են մի տողից մյուսը, բաց թողնում տառեր ու վանկեր: Նրանք հաճախ են շփոթում 6 և 9 թվերը, ռուսերեն Յ և Յ տառերը: Աստիճանաբար երեխաները տիրապետում են ընկալման տեխնիկային, սովորում են դիտել, լսել, տարբերել զլխավորը երկրորդականից: Փոխվում է նաև բառի դերը ընկալման պրոցեսում, այն դառնում է մտավոր հենարան ուրիշ բառի մաստներ ընկալելու համար: Զգալի չափով զարգանում է ժամանակի և տարածության ընկալումը: Նրանք տարբերում են տարածական հատկանիշները և կարողանում են չափումներ կատարել: Երեխաները ավելի շատ դժվարանում են ընկալել ժամանակային հատվածները: Հոգեբան Շաբալինի փորձերը հաստատել են, որ երեխաները կարճ ժամանակը ավելի օիշտ են ընկալում, քան տևական ժամանակը: Պրակտիկ նշանակություն ունի նաև տեմպի ընկալումը, ըստ հոգեբան Մեյմանի, երեխաներին ավելի մատչելի է միջին տեմպը: Ժամանակի ճիշտ ընկալումը կախված է երեխաների գործունեության կազմակերպումից: Ռեժիմի պահպանումը, ուսումնական առաջադրանքների սխտեմատիկ կատարումը, խաղի և աշխատանքի զուգակցումը երեխաների մոտ մշակու է ժամանակի ճիշտ ընկալումը:

Ուշադրություն զարգացումը

Ուշադրություն զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում ընթանում է ոչ կամաժին տեսակից դեպի կամաժին ուշադրությունը: Սկզբում երեխաները դժվարությամբ են կենտրոնանում հաղորդվող նյութի և ցուցադրվող առարկաների վրա: Առաջին և երկրորդ դասարաններում ուշադրության կազմակերպմանու կառավարման ուղղությամբ ուսուցչից պահանջվում են մեծ ջանքեր: Նախ պահանջվում է դասը վարել զննական ու ցուցադրական նյութերի օգտագործման մեթոդով. Խոսքը դարձնել հուզիչ ու գրավիչ, հարկ եղած դեպքում կիրառել ուսուցման խաղային մեթոդներ: Կամաժին ուշադրության զարգացման համար, ըստ հոգեբան Դոբրինինի , կարևոր է այն, թե որքանով են երեխաները գիտակցում սովորած նյութի կիրառական նշանակությունը: Վերջինիս գիտակցումը կենտրոնացնում ու կայունացնում է նրանց ուշադրությունը: 3-րդից 4-րդ դասարաններում արդեն երեխաները ուշադիր լինելու փորձ ու հմտություն են ձեռք բերում և կարողանում են ուշադրությունը բաշխել ու տեղափոխել: Երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու գործում մեծ դեր է խաղում նաև ուսուցչի խոսքի ու աշխատանքի տեմպը: Չափից դուրս արագ և չափազանց դանդաղ տեմպը շեղում է երեխաների ուշադրությունը:

Հիշողության զարգացումը

Դպրոցական ուսուցման առաջին տարիներին երեխաների հիշողությունը կրում է մեխանիկական վեարտադրողական բնույթ: Նրանք ձգտում են նույնությամբ սովորել ու կրկնել դասագրքից նյութը կամ ուսուցչի պատմածը: Այս հանգամանքը դժավարացնում է նյութի հասակացումը, ուստի պահանջվում է զարգացնել նրանց իմաստային հիշողությունը: Մեխանիկական տեսակից իմաստային ձևին անցնելու համար պահանջվում է կիրառել մեթոդական-հոգեբանական մի քանի հնարներ: Դրանցից են 1. ծավալուն նյութը առանձին մասերի բաժանելը և մաս-մաս սովորելը՝ վերջում այն ամբողջացնելով: 2. Առանձին մասերին վերնագիր նշանակելը: 3. Նյութի առանձին բաղադրիչների միջև նմանությունների և տարբերությունների գտնելը: 4. Նման հատկանիշները խմբավորելը և այլն:

Կարևոր հնարներից է նաև պլանային հարցեր կազմելը, դասակարգելը և առանձին մասերի միջև իմաստային կապեր ստեղծելը: Հիշողության և գիտելիքների ամրապնդման ավանդական մեթոդ է կրկնությունը: Սակայն կրկնությունը պետք է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր անգամ նյութը լրացվի ու հարստացվի նոր փաստերով ու անհայտ կողմերով: Կրկնության նպատակն է ամրապնդել յուրացման ենթակա ծրագրային նյութը և ուղղել տևական հիշողության մեջ: Երեխաներն ավելի լավ են հիշում

այն նյութը, որը զգացական տպավորություն է թողնում, կամ որի հետ գործողություն են կատարում: Նրանք վատ մտապահում և վերադառնում խոսքային, վերացական շարադրանքը:

Կրտսեր դպրոցականների հիշողության խթանման միջոցներից է մտախոհության պրոցեսների կիրառումը: Հոգեբան Սմիռնովը ուսումնասիրել է 2-րդ և 4-րդ դասարանցիների մտապահման հնարավորությունները: 2-րդ դասարանցիները ինքնուրույն կերպով չեն կարողանում գտնել առարկաների նման և տարբեր գծերը և համեմատություն չեն կատարում, իսկ 4-րդ դասարանցիները համեմատելու շնորհիվ հեշտությամբ հիշում են անցած նյութը: Գոյություն ունի նաև ռեմինիսցենցիայի երևույթը, երբ նյութը սովորելուց անմիջապես հետո ավելի վատ է մտապահվում ու վերարտադրվում, քան որոշ ժամանակ անց:

Մտածողության զարգացումը

Կրտսեր դպրոցականների մտածողությունը կրում է կոնկրետ պատկերային բնույթ, թեև պահպանվում են ակնառու գործնական տեսակի տարրերը: Մտածողության կոնկրետությունը դրսևորվում է նրանում, որ նրանք մոտավոր խնդիրները լուծում են միայն այն դեպքում, երբ առկա են նյութական առարկաները կամ նրանց պատկերները: Հաշվի առնելով մտածողության այս հատկությունը ուսուցչի մաթեմատիկական առաջադրանքները պետք է կոնկրետացնեն զննական պատկերային ձևով կամ առարկայական օրինակներով: Կրտսեր տարիքի երեխաներին բնորոշ է մտահանգման ինդուկտիվ ձևը, այսինքն կոնկրետ առարկայական մտածողությունից գնալ դեպի ընդհանուր, վերացականը: Մտածողությունը ավելի շատ վերացական հասկացություններ: Առաջին դասարանցու համար թիվը մտավոր հենարան դժվար է դառնում առանց կոնկրետ առարկայի: Թվերի հետ նա գործողություն է կատարում առարկաների միջոցով, որից հետո աստիճանաբար առարկաներին փոխարինում են մատները, փայտիկները կամ հաշվելի հատիկները: Ըստ ռուս հոգեբան Դավիդովի կրտսեր դպրոցականները ընդունակ են մտավոր գործողություններ կատարել վերացական հասկացություններով: Օրինակ. մեկ լիտր հեղուկը նշանակում են որոշակի երկարությամբ գծով, 2 լիտրը երկու անգամ երկար գծով, այնուհետև գծերը նշանակում են տառերով և ստանում հեղուկ-գիծ-տառ հաջորդական շղթան: Վերջում երեխաները գործողություն են կատարում միայն տառերի հետ:

Երևակայության զարգացումը

Կրտսեր դպրոցականների երևակայությունը, շնորհիվ նախադպրոցական, խաղային գործունեության, համեմատաբար լավ է զարգացած, քան մյուս հոգեկան պրոցեսները: Դպրոցական ուսուցումը նո նոր պահանջներ է դնում նրանց երևակայության առջև: Երեխաները ընթերցանության և պատմության դասերին ոչ միայն պիտի սովորեն նյութը, այլև պատկերացնեն ու մտովի վերականգնեն անցյալի իրադարձություններն ուղեմքերը, որոնց չեն տեսել: Սկզբնական շրջանում երեխաների երևակայությունը բնութագրվում է ունեցած մտապատկերների աննշան վերամշակմամբ: Հետզհետե նրանց մտապատկերները լրանում ու հարստանում են նոր տարրերով: Ռուս հոգեբան Իգնատևի գիտափորձերը ցույց են տվել, որ մանկական նկարների բովանդակությունը, տարիքի աճմանը զուգընթաց հարստանում է: Երևակայության զարգացմանը նպաստում են հիշողության նախկին պատկերները, որոնք երևակայական պատկերների համար դառնում են հոգեբանական <<շինանյութ>>:

Երեխաների երևակայության զարգացումը , ըստ անվանի հոգեբան Ժ. Պիաժեյի, անցնում է երեք հիմնական փուլ: Նախնական փուլը կապվում է սաստիկ պատկերների հետ, որոնք դրսևորվում են գրեթե առանց փոփոխությունների: Երկրորդը կինետիկ պատկերների փուլն է, որը համարվում է ստեղծագործական երևակայության նախադրյալը: Կրտսեր տարիքի երեխաների երևակայության տիրապետող տեսակը վերարտադրողական /ռեպրոդուկտիվ/ տեսակն է: Նրանք փոխում են պատմվածքների սյուժետային ուղղվածությունը, որոշ պատկերներ կրճատում, մյուսները՝ ընդարձակում: Հատկանշականն այն է, որ երեխաների երևակայությունը ուղեկցվում է բարձր հուզականությամբ, հատկապես նկարելիս, գույների ընտրություն կախված է նրանց տրամադրությունից ու հոգեվիճակից: Երևակայական մտապատկերները դառնում են երեխաների ստեղծագործական ընդունակությունների հոգեբանական հիմքը[5]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտական հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարած մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

- կրտսեր տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար
- դպրոցում սովորելու համար երեխայից պահաջվում է մտավոր, հուզական և սոցիալական զարգացվածության որոշակի մակարդակ
- կարևոր է երեխայի մոտ նախապես ձևավորել որոշակի դիրքորոշում դպրոցական դառնալու, դպրոցում սովորելու նկատմամբ
- Կրտսեր դպրոցականների հիշողության խթանման միջոցներից է մտախոհության պրոցեսների կիրառումը:
- Կրտսեր դպրոցականների ընկալումը սկզբնական շրջանում կրում է ընդհանրացված, ոչ տարբերակված բնույթ:
- Կրտսեր դպրոցականների երևակայությունը, շնորհիվ նախադպրոցական, խաղային գործունեության, համեմատաբար լավ է զարգացած, քան մյուս հոգեկան պրոցեսները

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Վ.Պետրոսյանի «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», Լույս հրատարակչություն, 1977:
2. Абрамова Г.С. Возрастная психология: Учебное пособие для вузов.-М.: Академический Проект,2010.-623с
3. Болотова А. К., Молчанова, О. Н. Психология развития и возрастная психология: учеб. Пособие, Нац. Исслед. ун-т «Высшая школа экономики». М.: Изд. Дом Высшей школы экономики, 2012. с 239
4. Мухина В.С., Возрастная психология.,М.,1997, стр. 345
5. Обухова Л.Ф. Возрастная психология. – М.: Россия, 2011, 414с.
6. Хрестоматия по детской психологии./Под ред. Г.В.Бурменской. - М., 2003.